

ցութեամբ պէտք է ընտրեն գպրոցի համար յարմարաւոր տեղ և իրանց վերջնական Նզրակացութիւնը մատուցանեն ԱԵՀ. Հայրապետի տնօրինութեան.

ԱԵՀափառ Հայրապետը, ինչպէս մեղ Հաղորդում են, առանձին կօնդակով պատուիրել է Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութեան, տարեկան 300 ոռորլի ցկեանս թոշակ սահմանել պ. Նիկ. Տէր-Յարութիւնեանցին (Յարոյ), որ 14 տարի ֆրանսերէնի ուսուցիչ է եղել նշյն դպրոցում:

### ԳՈԳՈԼԻ ԿԻՍԱՐՉԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անցեալ տարի ամբողջ Ռուսաստանը մնձ Հանդէսներով առնեց ոռւս ժողովրդի տաղանդաւոր զաւակներից մէկի, Գօգոլի, մահուան յիսնամեայ տարեդարձը, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն էլ ըստ պատշաճին յաւերժացնելու համար ոռւս նշանաւոր գրողի յիշատակը ի միջի այլոց որոշեց քաղաքի կենդրուններից մէկում կանգնեցնել Գօգոլի արձանը. Երբ արձանը պատրաստ էր արդէն, որոշուեց մարտի 19-ին Հանդիսաւոր կերպով բանալ.

Մարտի 19-ը գրական մարդու փառաւոր յաղթանակն էր Թիֆլիսում. առաւօտուանից վաղ քաղաքի բոլոր միջնակարգ և ստորին կարգի դպրոցների աշակերտներն իրենց երաժշտական խմբերով և պարզուած դրօշներով քաղաքի զանազան մասերից դիմում էին դէպի ոռւսաց զինուորական նորակառուց մայր եկեղեցին. գարնանային գեղեցիկ եղանակն էլ կարծես ուզում էր նպաստել Հանդիսի շքեղութեանը. Ժամի 1-ին արդէն բոլոր վարչական բարձրաստիճան անձինք, քաղաքիս Ներկայացուցիչները և Համբարներն իրենց դրօշներով և տեղական երաժշտական խմբերով՝ Հաւաքուել էին զինուորական տաճարում. Տաճարում հոգեհանգիստ կատարուելուց յետոյ Հանդիսականներն երաժշտական խմբերի նուագակցութեամբ ուղերուսեցան դէպի Ըլէքսանդրեան այգու վերին մասը, որ այդ օրը փակուած լինելով՝ միմիայն հրաւիրուածները մուտք ունեին. Վյգու ամբողջ վերին մասը զարդարուած էր կանաչով և դրօշներով. կիսարձանը ծածկուած էր սպիտակ սաւանով՝ Բարձրաձայն կեցցէներով խացնող հաշիւնների տակ արուեստադէս Խոդրովիչը—որին յանձնուած էր արձանի պատրաստութիւնը—վարագյրը յետ քաշեց և տասնեակ հազարաւոր աչքեր ուզգուեցին դէպի մնձ գրողի կիսարձանը. կիսարձանը շինուած է դեղնապղնձից (բրոնձից) և դրուած է Քութայիսի կարմիր քարից շինած պատուանդանի վրայ, որի ստորին մասը գորշ քարից է. Պատուանդանին կպած է մի մետաղեայ պսակ գրչով—պսակի

տակը զրուած է, ն. Վ. Գոգոյ, 1808—1842<sup>ւ</sup>. Արձանի բարձրութիւնն է 4 արշին 2 բերշով. Արձանը քաղաքին արժեցել է 40000 ը.

Հանդիսաւոր բացումից յետոյ քաղաքաղլիի պաշտօնակատարը և մի երկու այլ անձնիք ճառերով զրուատեցին տաղանդաւոր հեղինակի դրական գործունէութիւնը.

Ուրախալի երեցյթ-է, որ տաղանդաւոր դրական գործիչ-ները և մէջ իրենց կենդանութեան ժամանակ չեն զնահատւում, գոնէ յաջորդ սերունդները երախտագիտութեամբ են վերաբերում նոցա յիշատակին:

### ՀԱՅԱԶԳԻ ՆԱՐԻՄԱՆ ԽԱՆ

Բազմատեսակ խօսակցութեան առարկայ է դարձել Վիէննայի պարսից գեսպան հայազգի Նարիման-խանի անախորժ դէպքը. Նարիման-խանը մեծ սէր ու համակրութիւն է վայելում թէ շահի և թէ մեծ վեզիրի կողմից: Մի քանի տարի սրանից առաջ, երբ այժմեան մեծ վեզիրը աքսորուած էր Կում, այն ժամանակուայ մեծ վեզիր Ամին-Դօվլէն, որ այժմ աքսորուած է Ռէշտ, Աւստրիայից կանչեց բարօն Կօլիչէրին, որ կարգի բերէ պարսկական ֆինանսները. Վիէրջինն առանց ոչինչ շինելու՝ խանի տիտղոս ստացաւ, դարձաւ պարսից գեներալ վերադարձաւ Վիէննա և իրբն Պարսից կառավարութեան ներկայացուցիչ՝ սկսեց զանազան ակցիօներական ընկերութիւններ կազմակերպել. Սակայն Շահի ներկայացուցիչը Վիէննայում, Նարիման խանը, պաշտօնապէս հաղորդեց Աւստրիական կառավարութեանը և հրատարակեց լրագիրներում, որ բարօն Կօլիչէրը պարսից կառավարութեան լիազօրը չէ. այս յայտարարութեան չնորհիւ Կօլիչէրի ձեռնարկած ընկերութիւնները գլուխ չեկան: Բարօնը Նարիման-խանից վրէժխնդիր լինելու համար երկու լրագիր է հիմնում և արշաւանք սկսում նրա դէմ ամեն տեսակ լրագրատութիւններ և մեղադրանքներ բարդելով նրա վրայ. այս մեղադրանքներն ազդեցութիւն են ունենում և Աւստրիական պարլամենտում հարցապնդումներ են լինում. արտաքին գործոց նախարար Գոլուխովսկին հերքում է այդ բոլորը և մեղադրանքներն անհիմն անուանում: Բայց այնուամենայնիւ բարօն Կօլիչէրի լրագիրների յարձակումներն այնպիսի աղմուկ բարձրացրին Վիէննայի արխտուրատների վրջաններում, որ Նարիման-խանը ստիպուած եղաւ հրաժարուել իւր պաշտօնից և շահն էլ ընդունեց հրաժարականը:

Այսպիսով արկածախնդիր Բարօնի չնորհիւ պաշտօնից հեռացաւ 40 տարի քաղաքագիտական ասպարիզում գործող շահի և մեծ վէզիրի սիրելի Նարիման խանը: Խօսք կայ, որ պաշտօնաթող հայազգի գեսպանին շահը նշանաւոր վարչական պաշտօն պէտք է յանձնէ: